«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 9-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 183-րդ հոդվածի 4-րդ մասում «հրապարակման պահից մեկ ամիս հետո,» բառերը փոխարինել «վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո,» բառերով։

Հոդված 2. Օրենսգրքի 198-րդ **հոդվածի 1-ին մասը** շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե այն բողոքարկված չի եղել։»։

Հոդված 2. Օրենսգրքի 362-րդ **հոդվածի 1-ին մասում «**այն հրապարակվելու օրվանից» բառերը փոխարինել «նշված դատական ակտերը ստանալու օրվանից հետո՝» բառերով։

Հոդված 3. Օրենսգրքի 387-րդ **հոդվածի 1-ին մասը** շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վճռի, ինչպես նաև այլ եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում վճռաբեկության

կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե դրանք բողոքարկված չեն եղել։»։

Հոդված 4. Օրենսգրքի 391-րդ **հոդվածի** 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել դրանք ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում։ Այլ եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել դրանք ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում։».

2) 2-րդ մասի «պահից» բառը փոխարինել «օրվանից» բառով։

Հոդված 5. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո։
2. Սույն օրենքի դրույթները տարածվում են միայն այն բողոքների վրա, որոնք ներկայացվել են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո։ Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված բողոքների վարույթ ընդունելու հարցը լուծելիս կիրառվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Օրենսգրքի նորմերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 127-րդ **հոդվածի 1-ին մասը** շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե դրանք բողոքարկված չեն եղել։»։

Հոդված 2. Օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասում «Մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը,» բառերը փոխարինել «նշված դատական ակտը ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում,» բառերով։

Հոդված 3. Օրենսգրքի 148-րդ **հոդվածի 1-ին մասը** շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշումներն օրինական ուժի են մտնում վճռաբեկության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե դրանք բողոքարկված չեն եղել։»։

Հոդված 4. Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասում «Մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը,» բառերը փոխարինել «նշված դատական ակտը ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում,» բառերով։

Հոդված 5. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո։
2. Սույն օրենքի դրույթները տարածվում են միայն այն բողոքների վրա, որոնք ներկայացվել են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո։ Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված բողոքների վարույթ ընդունելու հարցը լուծելիս կիրառվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Օրենսգրքի նորմերը։